ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՐՃ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՐՃ ՊՈՅԱՃԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Յարգարժան պրն Պոյաճեան,

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վահէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր ազգաշէն ու եկեղեցանուէր երկարամեայ գործունէութեան մասին, որ Բարձրեալի օրհնութեամբ արդիւնաւորուած է բազում բարի իրագործումներով:

Լինելով անդամ ՀԲԸ Միութեան, ինչպէս նաեւ վարելով վարչական պատասխանատու պաշտօններ, Դուք մշտապէս զօրակից էք եղել մեր Եկեղեցու բարեջան սպասաւորներին, որ դրսեւորումն է առ Աստուած Ձեր հաւատի եւ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Ձեր որդիական սիրոյ:

Հարազատ մեր ժողովրդին ծառայելու պատրաստակամութեամբ Դուք առաջինը անսացիք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդարանի նոր շենք կառուցելու Առաջնորդ Սրբազանի նախաձեռնութեանը եւ մեծագումար նուիրատուութեամբ աջակցեցիք եկեղեցաշէն այս մեծ ծրագրի իրականացմանը: Ուրախ ենք, որ նորակառոյց Առաջնորդարանի կողքին շուտով պիտի կառուցուի նաեւ առաջնորդանիստ եկեղեցի, որի օծման արարողութեան կնքահայրը Սրբազան Հոր ցանկութեամբ լինելու էք Դուք՝ որպէս արժանի գնահատանք Տիրախնամ թեմին մատուցած Ձեր ծառայութեանց:

Հարգարժան պրն Պոյաճեան,

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով մաղթում ենք, որ Երկնաւոր Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր Հայրական հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ բարեպաշտ Ձեր ընտանեաց ադամներին՝ պարգեւելով քաջառողջ ու երջանիկ կեանք եւ յարաւորոգ յաջողութիւններ ազգանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Ապրիլի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 157